

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/3**

**23 դեկտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Ռազմիկ Դավթյանի 17.11.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 1407 որոշում դեմ:

**Ա/Ձ Ռազմիկ Դավթյանի գանգատում բերված փաստարկները.**

23.10.2013 թ-ին 100 դրամ գազավորված ընպելիք առանց ՀԴՄ կտրոնի վաճառելու փաստի կապակցությամբ Էրեբունու հարկային տեսչության աշխատակիցների կողմից կայացվել է թիվ 2330126 ստուգման ակտը, որով տուգանք է առաջադրվել՝ գումարով 105.000 դրամ, հարկային համակարգի զարգացման ֆոնդի մասհանման գումարը կազմել է 45.000 դրամ, որն առաջացել է 17.08.2012 թ-ի թիվ 2113274 ստուգման ակտով արձանագրված գումարից կատարված մասհանման գումարի կրկնապատկման արդյունքում: Նշված տուգանքները սահմանված ժամկետում Ա/Ձ Ռազմիկ Դավթյանի կողմից վճարվել են, սակայն Էրեբունու ՀՏ կողմից հաշվի չի առնվել, ինչի արդյունքում գումարը կրկնապատկվել է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով առկա հակասությունները Ա/Ձ Ռազմիկ Դավթյանը խնդրում է բեկանել ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 1407 որոշումը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Ռազմիկ Դավթյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 06.10.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Ռազմիկ Դավթյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.024.150 դրամ, որից հաստատագրված վճարի գծով տույժ՝ 16.270 դրամ, եկամտահարկի գծով՝ 154.383 դրամ, պարտադիր սոցիալական ապահովության գծով 193.494 դրամ, եկամտային հարկի գծով 60.003 դրամ, արտոնագրային վճարի գծով տուգանքներ 600.000 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի կողմից ընդունվել է 07.10.2014 թ-ի թիվ 1407 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Ռազմիկ Դավթյանից 1.024.150 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ 06.11.2012 թ-ին ՀՀ վարչական դատարան է ներկայացվել Ա/Ձ Ռազմիկ Դավթյանից 773.625 դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին հայցադիմում: Ա/Ձ Ռազմիկ Դավթյանի բյուջեի հանդեպ պարտավորությունների հանրագումարն առ 05.11.2012 թ-ի դրությամբ կազմել է 773.625 դրամ, որից սոցիալական վճարի գծով 317.152 դրամ, հաստատագրված վճարի գծով 201.473 դրամ, ՀԴՄ տուգանքի գծով 210.000 դրամ, հարկային համակարգի զարգացման ֆոնդի մասհանման գծով 45.000 դրամ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարի մասով պարտավորության հանրագումարն առ 05.11.2012 թ-ի դրությամբ կազմել է 317.152 դրամ, որից ապառք 255.881 դրամ, տույժ 61.271 դրամ: Պարտադիր սոցիալական ապահովության վճարի մասով պարտավորությունն առաջացել է 2011 թ-ի 4-րդ եռամսյակի հաշվետվությամբ և 2011 թ-ի նոյեմբերից մինչև 2012 թ-ի սեպտեմբեր ամիսների նվազագույն սոցիալական ապահովության վճարների ամսական գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Հաստատագրված վճարի գծով պարտավորությունը 05.11.2014 թ-ի դրությամբ կազմել է 201.473 դրամ, որից ապառք 138.079 դրամ, տույժ 63.394 դրամ: Պարտավորությունն առաջացել է 2011 թ-ի հոկտեմբեր ամսից մինչև 2012 թ-ի մարտ ամիսների հաստատագրված վճարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Ա/Ձ Ռազմիկ Դավթյանի սոցիալական վճարի գծով վերջին պարտավորությունն առաջացել է 2012 թ-ի սեպտեմբեր ամսվա նվազագույն սոցիալական վճարի գումարը չվճարելու հետևանքով, որի վճարման ժամկետը եղել է 2012 թ-ի հոկտեմբերի 15-ը ներառյալ: Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 5-րդ մասի դրույթների սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետից ուշացնելու համար հաշվարկվել են տույժեր մինչև 2013 թ-ի հոկտեմբերի 14-ը ներառյալ:

Հաստատագրված վճարի գծով վերջին պարտավորությունն առաջացել է 2012 թ. մարտ ամսվա հաստատագրված վճարի հաշվարկով, որի վճարման ժամկետը եղել է մինչև 2012 թ-ի ապրիլ ամսվա 15-ը: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հարկերի վճարումը սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկվել են տույժեր մինչև 2013 թ-ի ապրիլի 14-ը ներառյալ:

Հարկ է նշել նաև, որ ԴԱՀԿ ծառայության կողմից 30.01.2014 թ-ի որոշմամբ արգելանք է դրվել պարտապան Ռազմիկ Դավթյանի կենսաթոշակի վրա: Ընդ որում, արգելանքը դրվելու օրվա դրությամբ պարտավորությունների նկատմամբ հաշվարկված տույժերն արդեն իսկ դադարած են եղել:

ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագանձված գումարները փոխանցվել են Էրեբունու ՀՏ հաշվեհամարներին: Մասնավորապես, սոցիալական վճարի գծով բռնագանձված գումարները փոխանցվել են 16.12.2014 թ-ին՝ գումարով 223.329 դրամ, իսկ հաստատագրված վճարի գծով՝ 30.10.2014 թ-ին, գումարով 201.473 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 1407 որոշումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված լինելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 1407 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ